բիկ արձակավայրի եզերքումը հինգ վերստ հեռաւորութեան վերայ բարձրանում է. Սանտարուկ լեռը կամ բերդը: Այս բերդը մի եզական դիրք ունի. արևմուտքից արևելք ձգված մօտ ութ հարիւր ոտնաչափ երկայնութեամբ և տասն ութ ոտնաչափ լայնութեամբ երկու զուգահեռական ժայռեր են, որոնք պատում են հիւսիսից և հարաւից: Հարաւի կողմից տեղ-տեղ պակասում է բնական ժայռապատի շարունակութիւնը, այդ տեղ էլ տիտանական մեծութեամբ քարեր իրար վերայ շարած մինչև այժմ մնում են: Նորան կարելի է մատչել միայն արևմուտքից: Սորա հարաւային ստորոտում ձորամիջին տիված են Շաւարշանի աւերակները:

Այս աշխարհում ճանապարհորդողը, կարծես, մի հոգևոր տիրապետութեան մնացորդների վերայ է շրջում: Ցարդ մնում են Մաղու դեռի վերայ, տաշած քարերով կամարակապ չորս կամուրջներ, որոնք հայ եպիսկոպոսներն են շինել: Ճանապարհները, որոնց մէջ նշանաւոր է Կապի ճանապարհը,

---

կաւանի պատմութեան մէջ առաջ գնալով ասում է: «Եւ նոյն ժամայն ծովացեալ լցեալ մարդկութեամբ հովիտն ամենայն. քանզի աւանդաւուք և պարտականք ծառայք և վնասակարք և գողք և սպանողք և կնաշանք և այլք այսպիսի փախուցեալք անդր անկանէին. և ոչ կար նոցա այր և խնդիր»:

Շատ հաւանական է Խորենացու յիշած հովիտը Թայզաբարայ հովիտը համարել, որ բնակութեան մեծ յարմարութիւն ունի: